

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԻՄՆԱ ՍՊԸ-ն ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
18	ՌԻՄՆԱ ՍՊԸ	<p>Ուղղանկյուն են. Մակերեսը՝ մուգ կապույտ (35% բամբակ, 65% Պ/Է, 270գր.քառ.մետր) գործվածքով, վերնամասը՝ բազմանկյուն, ոսկեգույն մակաշերտով: Մաքսային ծառայության գնդապետի, փոխգնդապետի և մայորի կոչումներ ունեցող ծառայողները կրում են 2 մակաշերտով, իսկ կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողները՝ 1 մակաշերտով ուսադիրներ: 2) շնորհված կոչմանը համապատասխան՝ ա. մաքսային ծառայության գնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 20 մմ տրամագծով երեք, փոխգնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու, մայորի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ մեկ, ոսկեգծ հնգաթև աստղեր, բ. մաքսային ծառայության կապիտանի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 13 մմ տրամագծով չորս, ավագ լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երեք, լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ մեկ, ոսկեգծ հնգաթև աստղեր, գ. գնդապետի, փոխգնդապետի և մայորի ուսադիրների վրա տեղադրվում են 20 մմ լայնքով ոսկեգծ թելերով հյուսքածև գործվածքի մեկ շերտ՝ ուսադիրի ստորին եզրից 5 մմ հեռավորության վրա, ուսադիրի երկայնական</p>

առանցքային գծին ուղղահայաց, դ. կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի ուսադիրների վրա տեղադրվում են 10 մմ լայնքով ոսկեգոծ թելերով հյուսքածև գործվածքի շերտ՝ ուսադիրի ստորին եզրից 5 մմ հեռավորության վրա, ուսադիրի երկայնական առանցքային գծին ուղղահայաց. 3) ուսադիրները վերին մասում ամրացվում են Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տարբերանշանի պատկերով մեկական ոսկեգույն կոճակով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

РИМНА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22764-ЕЦХ-Ц72Р-21/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
18		